յաղթած էր, Մըհեն մի առանձին փաղաքշական եղանակով ասում էր նրան. «հանգստացի՛ր, գառնուկս, ես քեզ երկար այստեղ չեմ թողնի»: Եւ իրաւ, մի քանի րոպէից յետոյ յայտնւում էր Մըհեն, իր հետ դուրս քաշելով գազանին, որի գլուխը եւ բերանը կաշկանդած էին լինում քալափչէի մէջ, եւ այնքան ամուր կերպով, որ ոչ ոքին վնասել չէր կարող:

Խիստ սակաւ անգամ էր պատահում, որ Մըհեն դուրս գար վիրապից երեսը արիւնաթաթախ, ծվատոած կամ մարմնի մի այլ մասը վիրաւորոած: Բայց երբեք չէր պատահում, որ նա չկարողանար զսպել գազանին: Ես մինչեւ այսօր յիշում եմ, թէ որպիսի՛ անհոգութեամբ այդ երկաթէ մարդը ձեռքով սրբում էր իր երեսից արիւնը, կարծես թէ քրտինք էր սրբում:

Աւօյի պարապմունքի մէջ Մըհեն օգնում էր նրան աւելի, քան նրա բոլոր որսորդական շները եւ բարակները: Նա զարմանալի ճարպկութիւններ եւ հասկացողութիւն ունէր որսորդութեան մէջ: Անասունների բնաւորութիւնը եւ նրանց սովորութիւնները նա այն աստիճան ուսումնասիրած էր, որ բաւական էր տեսնել նրանց թաթերի ձիւնի վրայ տպաւորոած հետքերը, այնուհետեւ նա գիտէր, թէ ի՞նչ անասուն էր անցել, որտե՞ղ կարելի է գտնել նրան կամ ի՞նչ հնարքով պէտք էր որսալ:

Աւօն ուրիշ պարապմունք չունէր. նա ապրում էր որսորդութիւնով միայն: Մազոտ գազանների մորթերի գործածութիւնը մահմեդականների համար պիղծ համարոելով, թուրքերը, պարսիկները եւ քրդերը նրանց որսորդութիւնով չէին պարապում, եւ այս պատճառով ասպարէզը մնացել էր միայն Աւօյին: Նրա տունը մի կատարեալ գազանանոց էր: Ամէն անգամ, ես այնտեղ գնալիս, գտնում էի նրան զբաղոած կամ գազանները կերակրելով եւ կամ աղուէսի, կուզի, գայլի, արջի, վագրի եւ այլ այս տեսակ անասունների մորթերը չորացնելով: Հրէայ եւ հայ վաճառականները իրանք գալիս էին, եւ գնելով մորթերը, տանում էին հեռու երկրներ վաճառելու:

Մարօն այն աստիճան ընտելացած էր գազանների հետ, որ ամենեւին նրանցից չէր վախենում: Մի անգամ նա ցոյց տոեց ինձ մի ամեհի վագր, ասելով.

— Տես, Ֆարհատ, ի՞նչ գեղեցիկ բծեր ունի:

Ես սարսափեցայ, երբ փոքրիկ աղջիկը մօտեցաւ եւ սկսեց փայփայել գազանի ահագին գլուխը:

— Ինչո՞ւ ես վախենում, — ասաց նա ծիծաղելով, — դա մի մեծ կատու է, եւ աւելի ոչինչ: